ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/ 13388

17.12.2018թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091 40 78 36, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ս.թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ԱԳՆ ուղղված հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը քաղաքացիների, ՀԿ-ների և լրագրողների հարցումները ստանում է ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային՝ ԱԳՆ պաշտոնական սոցիալական հարթակներով (ֆեյսբուքյան, թվիթերյան հաշիվներով), ԱԳՆ պաշտոնական էլեկտրոնային հասցեներով, փաստաթղթաշրջանառության Mulberry էլեկտրոնային համակարգով և այլն:

Տեղեկացնում ենք նաև, որ հաշվի առնելով ԶԼՄ-ների կողմից ուղղված հարցումների հրատապությունը՝ շատ դեպքերում դրանց պատասխանները տրամադրվում են բանավոր կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը և տարաբնույթ հարթակներով ԱԳՆ-ին ուղղված հարցումների վիճակագրությունը կազմելու անհրաժեշտությունը՝ ներկայումս մշակման փուլում է գտնվում այն կանոնակարգված կերպով կազմելու մեխանիզմը:

2016թ. ընթացքում ԱԳՆ լրատվության և հանրային դիվանագիտության վարչությունը պատասխանել է տարբեր հասարակական կազմակերպություններից ստացված 63, ԱԺ պատգամավորներից՝ 11 և անհատներից՝ 50 հարցման, 2017թ.՝ տարբեր հասարակական կազմակերպություններից ստացված՝ 69, ԱԺ պատգամավորներից և անհատներից ստացված 56 հարցման, իսկ 2018թ. ընթացքում՝ տարբեր հասարակական կազմակերպություններից և անհատներից՝ ընդհանուր 215 հարցման:

Բոլոր հարցումներին տրվել է դրական պատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**

Կատարող՝ Հռիփսիմե Մարկոսյան

Հեռ. 060 620 283